եւ միանալով Բալախոռին՝ ոռոգում են Մեծ *եւ* Փոքր Կարզի, Նիփ, *եւ* Վագանդա *գեղերը։ Առաջ գնալով դաշտում անցնում է ոռոգելով* Պինտոնրգուզ, Կաստասի, Մալիէ *գեղերը։ Սադանլու լեռներից իջնում է* Խան-Զուր *առուակը հիւսիսից հարաւ, ձախից խառնուում է Բալախոռին, իր ընթացքում ոռոգելով* Տարգետի, Աշուր *եւ* Զուրմավանց *գեղերը։*

Սարի-Կլայա լչ-ից դէպի հարաւ են իջնում եւ Բալախոռի վտակին են միանում Ջինջուլ (*Ջինջ ջուր կամ ճենջուր*) *առ-ը իր բազմաթիւ առուներով, որոնք ոռոգում են* Վարդանոց[1], Ջեղուլ, Ցրդաձոր, Կիւտ-

---

1 "Գիւլի Անահիտ"-Անահիտի վարդանոցը այնքան հին է, այնպէս ժողովրդականացած շրջապատի բոլոր գիւղերի համար, այնպիսի ուխտատեղի — զուարճութեան վայր է, որ հազարաւոր տարիներ անդնելուց յետոյ, դարձեալ պահպանել է իր դիրքը։ Ամէն տարի, ոչ միայն Հայերը, այլ թուրքացածները, մանաւանդ Ալիուլլահի աղանդաւորները վարդավառին մեծամեծ խմբերով գնում են այնտեղ ուխտի, դաբուզզուռնայով ծաղիկ-պար են բռնում — հարս, աղջիկ, երիտասարդ, պատանի եւ իրենց երգերով թնդացնում են լեռներն ու ձորերը։ Ճորոխի Աւազանի ամէն մի կողմը վարդանոցները — այս խոր-խոր ձորերը իրենց վարդաստաններով նուիրուած են անջինջ ջրերի Մեծամօրը-Անահիտին։ Ինչպէս Լոռի առուակի, նոյնպէս Ջինջուլ առուի վարդանոցները գտնուում են այդ առուների ակունքում, ամենազօրեղ աղբերակների ձորերում, որով ստիպւում են ենթադրելու, թէ նրանք անպայման Անահիտի ուխտատեղիներն են, Մոխրապաշտութեան, Քրիստոնէութեան, Մահմեդականութեան եւ այլ բազմաթիւ աղանդների գոյութեան շրջանում, բռնաւորների, պրոպականտիստների, դահիճների սրերը չեն կարո-